

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ  
ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԶԴԻԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻՆ՝ ՄԱԼԱՔԵ ԹԱՈՒՍԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հայաստանի և Արարատ համայնքի եզդիական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի տոնի առիթով:

Այսօր պետք է ևս մեկ անգամ շեշտադրենք, որ շատ մեծ է եղել մեր եզդի եղբայրների և քույրերի ավանդը մեր երկրի շենացման ու կայացման, արհավիրքներին միասին դիմակայելու և պայքարելու գործում: Համոզված եմ, որ հայ և եզդի ժողովուրդների բարեկամությունն ավելի կամրապնդվի՝ հիմնվելով ձևավորված ավանդույթների և լավ բարեկամության վրա:

Սիրելի՛ եզդիներ, թող Նոր տարին ձեզ համար լինի առատության և առողջության տարի: Մաղթում եմ ձեզ սեր, նորանոր հաջողություններ և ամենայն բարիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ